

ՀԱՅԵՐԷՆՈՒՄ «ՎԱՐԱԳՈՅՐ» ԲԱՌԻ ԴՐՍԵԻՈՐՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

ՆԱՐԵԿ (ՎԱՆ) ԱՇՈՒՂԱԹՈՅԵԱՆ

Մ. Մաշտոցի անուան Մապրենադարանի հայցորդ

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Այս յօդուածում քննարկուում են հայերէնում լայնօրէն կիրառուող *վարագոյր* բառի ծագման հարցերը, ինչպէս նաեւ դրա բարբառային տարատեսակ դրսեւորումները եւ հոմանիշները, որոնք, ի դէպ, բաւականին առատ են: Բարբառային դրսեւորումների եւ հոմանիշների առատութիւնը, ինչպէս նաեւ վարագոյրին վերագրուող խորհրդաբանական առանձնայատկութիւնները թոյլ են տալիս կարծել, որ հայկական միջավայրում վարագոյր երեւոյթն ունի առանձնայատուկ կարեւորութիւն:

Առանցքային բառեր. *եկեղեցական վարագոյր, վարագոյր, վարաքոր, խորանի վարագոյր, փարդա, ծածկոց, գոգնոց:*

Հայոց եկեղեցում լայնօրէն կիրառուող վարագոյրի խորհրդաբանութեան ակունքները ձգուում են մինչեւ հինկտակարանեան որոշակի իրադարձութիւններ: Եկեղեցին, վարագոյրի գործածումը փաստացի փոխառելով Հին ուխտից, պահպանել է դրա նախնական ու հիմնական գործառոյթը, այն է՝ զատել սրբազան տարածքները. «...եւ *անշրպեարիցէ՛ ձեզ վարագոյրն ի մէջ սրբութեանն*, եւ *ի մէջ սրբութեան սրբութեանցն՝*»: Եկեղեցում վարագոյրը, ըստ էութեան, ընկալուում է որպէս այլաբանական պատ, երբեմն էլ՝ դուռ², որի շարժական հանգամանքը հաւատացեալին եւ՝ մերձեցնում, եւ՝ պատնէշում է Սրբութիւն Սրբո-

¹ Ելք ԻԶ. 33-34

² Յատկանշական է, որ Ծաղկազարդի երեկոյեան կատարուում է խորանի վարագոյրի բացման արարողութիւն, որը կոչուում է **դռնբացէք**: Տե՛ս **Արարակ արք. Մանուկեան**, *Հայ եկեղեցու րօները*, Թեհրան, 1999, էջ 120

Սրբոցից (ասուածը լաւագոյնս արտայայտուած է Հայոց եկեղեցու ծիսակարգում): Սրբազան տարածքների տարանջատումից բացի՝ եկեղեցու վարագոյրը ունի մէկ այլ գործառնութիւն եւս. նրա մակերեսի վրայ յայտնուում են պատկերներ, որոնք կոչուած էին ծէսի մասնակիցների համար տեսլաւորելու սրբազան տեսարաններ՝ ապահովելով որոշակի հոգեւոր-յուզական ներգործութիւն:

Նկատի առնելով վարագոյրի խորհրդաբանական խորը շերտերը եւ որպէս ծիսական առարկայ դրա լայն կիրառութիւնը՝ մեզ համար յատուկ հետաքրքրութեան առարկայ են դառնում հայերէնում *վարագոյր* բառի լեզուական դրսեւորումները: Եկեղեցական վարագոյրների մեր հետազօտութեան ընթացքում տարաբնոյթ գրաւոր յիշատակութիւններում հանդիպում ենք *վարագոյր* բառի բարբառային մի շարք ձեւերի եւ հայերէն ու փոխառեալ հոմանիշների: Վերջիններիս առատութիւնը ենթադրում է, որ ծիսական նշանակութեան այս առարկան մեզանում ունի առանձնայատուկ կարեւորութիւն: Ուստի այն յօդուածում քննարկելու ենք *վարագոյր* բառի ծագումը, բարբառային ձեւերը եւ հոմանիշները:

Վարագոյր բառը հայերէնում ունի հնագոյն կիրառութիւն: Արդէն իսկ հայերէնի առաջին թարգմանիչները Սուրբ գրքի տեքստում այս բառը գործածել են³: Հետաքրքիր է *վարագոյր* բառի ծագման հարցը. արդեօք այն բուն հայկական է, թէ՞ ունի օտար արմատներ: Հրաչեայ Աճառեանն իր «Հայերէն արմատական բառարան»-ում վարագոյր բառի ծագման վերաբերեալ իւր տեսակետը չի յայտնում՝ թողնելով բառն առանց ստուգաբանութեան, սակայն յիշատակում է այլոց մօտեցումները⁴: Այդ շարքից է Յարութիւն Թիրեաքեանի

³ Տե՛ս Համալսարան Աստուածաշունչ մատենի, աշխ.՝ Վեր. Վ. Գ. Սահակեանի, Պէյրութ, 1963, էջ 947: Ի դէպ՝ *վարագոյր* բառը Նոր Կտակարանի հունարէն քնագրում հանդիպում է *καταπέτασμα* տարբերակով:

⁴ Հ. Աճառեան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 4, Երևան, 1979, էջ 314:

ստուգաբանությունը. «**var** (ծածկոյթ)ը կ'ընտրէի միացնել **كير gīr** արմատին հետ, իբր **كیر وړ = վարզիր** յորմէ վարագոյր, այսինքն ծածկոյթ կրող, կամ ծածկոյթ պարզապէս»⁵: Ըստ Գեորգ Ջահուկեանի՝ բառն ունի պարթեական ծագում՝ **[brgwd]**⁶: Բառի պարթեական ծագման վերաբերեալ Լավրենտի Յովհաննիսեանը գրում է, որ այն «ծագում է իրանական *'vargōd* հին *vāragauda-hg*, որի երկրորդ բաղադրիչը՝ *gauda* «ծածկոց, վարագոյր», առկայ է միջին իրանական մի շարք լեզուներում: Առաջին բաղադրիչը **var** «պար, ցանկապար, որմ» բառն է, որ հանդիպում է նաեւ պարուար բառում»⁷: Բառի **ցօծ** բաղադրիչը հայերէնում կանոնաւորապէս դառնում է **գոյր**: Հետաքրքիր է, որ **գոյր** բաղադրիչով հայերէնում կայ նաեւ *շարագոյր*⁸ բառը՝ որպէս *քօղ, ծածկոց*: Հայերէնում *վարագոյր* բառի ըխցումը պարթեական աղբիւրից նկատուած ու քննուած է այլոց մօտ եւս՝ *barγōd* [brγwd]⁹ - վարագոյր, քօղ: Այս բոլոր աղբիւրների համադրութեամբ *վարագոյր* բառի պարթեական ծագման հանգամանքը կարծես դառնում է միանգամայն հիմնաւորուած¹⁰:

Վարագոյրի գործառնոյթի մասին խօսելիս բառարանները յաճախ շեշտում են վերջինիս ծածկելու, ինչ-որ բան անջրպետելու յատկությունը: Օրինակ՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանը սահմանում է. «Առագասար. ծածկոյթ վերուստ 'ի վայր կամ 'ի վերայ ագուցեալ ...»¹¹: Վարագոյրով անջրպետելը,

⁵ Յ. Թիրեաքեան, Արիահայ բառարան, Վիեննա, 1914, էջ 345:

⁶ Գ. Ջահուկեան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 545: Ջահուկեանի աւելի ուշ հրատարակուած ստուգաբանական բառարանում բառի իրանական ծագումը ներկայացուում է որպէս ոչ միանշանակ, թէւ մի շարք լեզուաբաններ դրա իրանական ծագումը համարում էին որպէս փաստ (տե՛ս Գ. Ջահուկեան, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010, էջ 706):

⁷ Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, 1990, էջ 260:

⁸ Նոյն տեղում, էջ 255:

⁹ R. Schmitt, "«Méconnaissance» altiranischen Sprachgutes im Griechischen", in: *Glotta*, 49.1/2, 1971: 109-110.

¹⁰ Վարագոյր բառի պարթեական ծագման վերաբերեալ մի շարք աղբիւրներ մեզ յուշելու համար շնորհակալութիւն ենք յայտնում Բ.Գ.Պ. Հրաչ Մարտիրոսեանին:

¹¹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, հ. 2, 1837, էջ 789:

պատնեշելն ունի նաեւ բացասական իմաստ: Օրինակ՝ հայերէնի դարձուածքներում հանդիպում ենք *«երկաթե վարագոյր»*¹² արտայայտութեանը, որ նշանակում է՝ դաժան միջոցներով մեկուսացում: Հանդիպում ենք նաեւ *«վարագոյրի պարտովել»*¹³ դարձուածքին՝ ճշմարտութիւնը պարզելու, մէջտեղ հանելու իմաստով: Հոգեւոր առումով՝ *վարագոյրի պատրուել* արտայայտութիւնը որպէս բացասական երեւոյթ լաւագոյնս ներկայացուած է աւետարանական այն դրուագներում, որտեղ նկարագրուում է տաճարի վարագոյրի՝ երկու մասի պատռուելը: ԺԲ դարի եկեղեցու հայրերից Սարգիս Կունդն իր *«Ղուկասու Աւետարանի մեկնութիւնում»* համեմատում է. *«Քահանայապետն անսարէնութեամբ պատրուեաց զպարմոճանն, եւ Հոգին Սուրբ պատրուեաց զվարագոյրն, զի քարոզեացէ զՀրէից [զ]ժպրհութիւն ընդ տիեզերս»*¹⁴:

Հայկազեան բառարանը մէջտեղ է բերում վարագոյր բառից ձեւաոորում թառեր, որոնք արդի հայերէնում գործածական չեն: Դրանք են՝ *վարագոյրաձիգք* կամ *վարագոյրաձիգք* եւ աւելի սակաւ՝ *վարագորեն*¹⁵: Հրաչեայ Աճառեանն իր արմատական բառարանում յաւելում է նաեւ *վարագորակալ* բառը¹⁶:

Մեր հետազոտութեան արդիւնքում առանձնացնում ենք վարագոյր բառի գրութեան հետեւեալ ձեւերը.

վարագոյր, վարագոր, վարագոյն, վարաքոր, վարաքույ, վարաքիւր, վարաքիւ, վարակ'ուն, վառակ'իւլ, վառագ'ոյ, վառագ'ոյ, վարարքու, վարակիւռ, վարագոռ, վարայգոր, վարայգոր, վանայգուլ, վարագուն, վարաքուն:

¹² Պ. Բեդիրյան, *Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան*, Երևան, 2011, էջ 1226:

¹³ Նոյն տեղում, էջ 1227:

¹⁴ Սարգիս Կունդ (ԺԲ դ.), *Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու*, աշխ.՝ Եզնիկ եպս. Պետրոսյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2005, էջ 565:

¹⁵ Նոր բառգիրք..., հ. 2, էջ 789:

¹⁶ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 4, էջ 314:

Հիմնական աղբիւրներում ամենից առաւել հանդիպում ենք *վարագոյր* եւ *վարագոր* տարբերակներին: Դրանք յատկապէս նկատելի են նուիրատուական արձանագրութիւններում¹⁷, ինչպէս նաեւ պատմաստուածաբանական աղբիւրներում: Օրինակ՝ Սուրբ Գրիգոր Տաթեւացին իր «Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հալոր»-ում օգտագործում է վարագոյր բառի յիշատակուած ձեւը. «Եւ այսպէս զգալիս երկինք վարագոր և անջրպետ ի մէջ նոցա է անկեալ»¹⁸:

Ըստ Հրաչեայ Աճառեանի՝ *վարագ'որ*, *վարաքոր*¹⁹ (*գուն. նկ. 3*), *վարաքոյ*, *վարաքիւր*²⁰, *վարաքի*, *վարակ'ոռ*, *վառակ'իւլ*, *վառագ'ոլ*, *վառագ'ոլ*, *վարաքրո* բառերը գաւառական դրսեւորումներ են²¹: Օրինակ՝ Վանի բարբառում վստահաբար օգտագործուել է *վսիւսկյոռ*²² տարբերակը, որ նման է Մոկսի բարբառում հանդիպող *վսիւսկիւլ*²³ ձեւին: Աճառեանի առանձնացրած՝ վարագոյր բառի գաւառական դրսեւորումների շարքին մենք կաւելացնէինք նաեւ մեզ հանդիպած *վանայգոյլ*, *վարագուն*, *վարագոռ*, *վարայգոր*, *վարայգոր* տարբերակները:

Վանայգոյլ ձեւին հանդիպել ենք Նոր Բայազետում պատրաստուած մի վարագոյրի արձանագրութիւնում. «Նըկարիչ վանայգոյլիս Պօղոս պարկերայիսն ...»²⁴: Հետաքրքրական է նաեւ *վարագուն* ձեւը: Հառիճաւանքի 1795 թուականի վարագոյրի արձանագրութեան մէջ կարդում ենք. «Յիշ(ա)ր(ա)կ է վարագունս աս(ա)ջի ... »²⁵: Հազուադէպ հանդիպող բարբառային դրսեւորում է նաեւ *վարայ-*

¹⁷ Տե՛ս մի շարք օրինակներ՝ Հարկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների, պրակ 1, հայերեն արձանագրոյթամբ առարկաներ, աշխ.՝ Ե. Մուշեղյանի, Երևան, 1964, էջ 113, 115, 121:

¹⁸ Սբ Գրիգոր Տաթեւացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հալոր, Կ.Պոլիս, 1741, էջ 571:

¹⁹ Այս ձեւը մեզ նոյնպէս հանդիպել է նուիրատուական արձանագրութիւններից մէկում, Տե՛ս Հարկանշական ցուցակ..., պրակ 1, էջ 101 (128):

²⁰ Տե՛ս նաեւ M-A. Privat-Savigny (ed.), *Ors et Trésors d'Arménie*, catalogue de l'exposition, Musée des tissus et des arts décoratifs, (Lyon, 2007), p. 144-145.

²¹ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, էջ 314:

²² Հ. Թուրշյան, Բառարան Վանի բարբառի, Երևան, 2018, էջ 205:

²³ Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Երևան, 1952, էջ 293:

²⁴ Հարկանշական ցուցակ..., պրակ 1, էջ 125 (184):

²⁵ Նոյն տեղում, էջ 111 (146):

գոր տարբերակը: Վերջինը նկատել ենք Օձունի 1806 թուականի վարագոյրի մի արձանագրութեան մէջ. «Աւարտեցաւ վա **վարայգորրւ...**»²⁶: Առանձնացրել ենք նաեւ **վարայգոր** ձեւը, որին հանդիպում ենք Վարդան Այգեկցու առակներից մէկում. «**քարշեցին զվարայգորն...**»²⁷: Եզակի դրսեւորում է **վարագուն** տարբերակը, որը նկատել ենք 1602 թուականին գրուած մի ձեռագիր յիշատակարանում²⁸: Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի 1853 թուականի մի վարագոյրի վրայ էլ հանդիպում ենք **վարաքուն**²⁹ իւրօրինակ ձեւին:

Որպէս **վարագոյր** բառի հոմանիշներ՝ առանձնացրել ենք հայերէն եւ փոխառեալ հետեւեալ բառերը.

ծածկոց, գոգնոց, շղարշ, պարտուակ, նուարտան, վիժակ, քոյ, սրահակ, սրկապան, առագաստ, փարդա(յ), ֆարդայ, քէրպէ, էօրթիւ, ճիպինլիք, թէնթէ:

Քէրպէ, էօրթիւ, ճիպինլիք, սրկապան բառերը հայկական ծագումն չունեն, սակայն, այլ փոխառութիւնների պէս, սրանք եւս տարածում են գտել հայերէնի բարբառներում: Թուարկուածները յիշատակուում են Նոր Հայկազեան բառարանում՝ որպէս վարագոյրի հոմանիշներ³⁰: Նման օտար բառեր նկատում ենք նաեւ այլ բառարաններում:

²⁶ Նոյն տեղում, էջ 114 (154):

²⁷ **Ն. Մառ**, *Ժողովածոյք առակաց Վարդանայ*, մասն Բ, Ս.Պետերբուրգ, 1894, էջ 74:

²⁸ *Հայերեն ձեռագրերի Ժէ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)*, կազմ.՝ **Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան**, հ. Ա, Երևան, 1974, էջ 62: Տե՛ս նաեւ **Ռ. Ս. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան**, *Միջին հայերենի բառարան*, Երևան, 2009, էջ 732:

²⁹ Վարագոյրը հաւանաբար նախատեսուած է եղել խորհրդանոցի կամ մկրտութեան աագանի կամ որեւէ այլ սրբազան խորշ ծածկելու համար: Ունի իւրայատուկ պատկերագրութիւն. կենտրոնում պատկերուած է շոգենաւ:

³⁰ *Նոր բառգիրք...*, հ. 2, էջ 789:

Օրինակ՝ *թէնթէ*³¹ եւ *փարդայ (փարսայ)*³² բառերը: Վերջինը փոխառնուած է պարսկերէնից³³: 1741 թուականի եկեղեցական մի վարագոյրի վրայ այս բառը եւս հանդիպում է. «Յաս է: *Փարդէս: ս(ուր)ք: Իչման տիդի: ...*»³⁴: *Փարդայ* բառը հայերէնում նկատում ենք նաեւ հետեւեալ դրսեւորումներով՝ *փէրպէ*³⁵, *Ֆարսա*³⁶: *Գոգնոց*³⁷ եւ *ծածկոց*³⁸ բառերը, թէեւ ունեն փոքր-ինչ այլ իմաստային առանձնայատկութիւններ, երբեմն ընկալուում են որպէս վարագոյր բառի հոմանիշներ: Մեզ համար առանձնայատուկ հետաքրքրութիւն ունի *պապրուսակ* բառը, որը գրաբարում գործածուում է որպէս *վարագոյր* բառի հոմանիշ³⁹: Սուրբ Գրիգոր Նարեկացին, մէջբերելով Եզեկիէլին, օգտագործում է *վարագուրին պապրուսակ*⁴⁰ արտայայտութիւնը, որն աշխարհաբար թարգմանուում է որպէս *վարագոյրի ծածկոյթ*⁴¹:

³¹ Հ. Մ. Ագեբեան, *Առձեռն բառարան հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1846, էջ 692: Բառարաններից մէկում թէնթէ բառը բացատրուում է իբրեւ *սարդիոսրայն*, *տեն Գ. դպիր Տէր-Յովհաննէսեան Պալատացի*, *Բառարան պարսկերէն ըստ կարգի հայկական այբուբենից*, Կոստանդնուպոլիս, 1826, էջ 116: *Թէնթէ* բառն այլ բառարանում ներկայացուում է որպէս երոպական փոխառեալ բառ՝ սփոռոց, վրան, վարագոյր բացատրութիւններով: Տեն Հ. Աճառեան, *Երոպական փոխառեալ բառեր հայերէնի մէջ*, Վիեննա, 1951, էջ 79-80:

³² Հ. Մ. Ագեբեան եւ Հ. Գ. Ճէլալեան, *Առձեռն բառարան հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1865, էջ 808:

³³ Ս. Մալխասեանց, *Հայերէն բացադրական բառարան*, հ. 4, Երևան, 1945, էջ 623:

³⁴ Յատկանշական է, որ նշուած վարագոյրը չի հանդիսանում մեծ խորանի վարագոյր եւ իր ձեւով ու չափով նման է եկեղեցական գոգնոցի: Վարագոյրի պատկերը տես Վ. Դերիկյան, *Սուրբ Էջմիածինը արվեստում*, Երևան, 2015, էջ 46: «Իչման տեղի» եզրոյթը յուշում է, որ այն նախատեսուած է եղել Էջմիածնի Մայր Տաճարի կենտրոնում գտնուող Իչման Ս. Սեդակի համար:

³⁵ Տեն Հայրեններու բուրաստանը. սիրոյ երգեր, *պանդուխտի երգեր*, վերագրուած՝ Նահապետ Քուչակ վարպետ աշուղին եւ իր հետերդններուն, համախմբեց եւ ի լոյս ընծայեց քննական ուսումնասիրութեամբ մը եւ ծանօթագրութիւններով Ա. Զօպանեան, Փարիզ, 1940, մաս 1-ին, 23-րդ տաղաշարը:

³⁶ Այս բառը հանդիպում ենք Դաւիթ Սալաճորցու տաղերից մէկում: Տեն Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVII դդ.), հ 2, աշխ՝ Հ. Սահակյանի, Երևան, 1987, էջ 372:

³⁷ Հարկանշական ցուցակ..., պրակ 1, էջ 92 (105), 97 (117):

³⁸ Նոյն տեղում, էջ 94-95 (110):

³⁹ Ռ. Ս. Ղազարեան, *Գրաբարի բառարան*, հ. 2, Երևան, 2000, էջ 401:

⁴⁰ Գրիգոր Նարեկացի, *Մարեան ողբերգութեան*, աշխ.՝ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Երևան, 1985, էջ 380:

⁴¹ Տեն Գրիգոր Նարեկացու *Մարեան ողբերգութեան* արեւելահայերէն թարգմանութիւնը ըստ Մ. քին. Արամեանի, Երևան, 2019, էջ 170:

*Առագաստ, նուարության, շղարշ, շարագոյր*⁴² (շար), *սրահակ*⁴³, *վի-ժակ*⁴⁴, *քոլ* բառերը եւս առանձնացրել ենք տարբեր բառարաններից՝ որպէս *վարագոյր* բառի հոմանիշներ: Յիշատակի արձանագրութիւններում այս տարբերակներին դեռ չենք հանդիպում, սակայն դրանց մէկտեղումը կարելւորում ենք ատելի ընդգրկուն հետազոտութիւնների համար:

Ինչպէս տեսնում ենք, հայերէնում իրանական ծագում ունեցող *վարագոյր* բառի բարբառային տարատեսակ դրսեւորումները եւ հոմանիշները բաւականին առատ են: Այս իրողութիւնը գուցէ պայմանաւորուած է նրանով, որ վարագոյրը, բացի կարելուր ծիսական պարագայ լինելուց, նաեւ իր լայն կիրառութիւնն է ունեցել աշխարհիկ միջավայրում: Այդուհանդերձ, յաշուի առնելով քննարկուած օրինակների լայն հորիզոնը՝ վաղ աստուածաբանական տեքստերից մինչեւ ուշ միջնադարեան արձանագրութիւններ՝ կարելի է ենթադրել, որ *վարագոյր* երեւոյթն առանձնայատուկ կարելւորութիւն է ունեցել հոգեւոր եւ աշխարհիկ միջավայրերում: Մեր այս ենթադրութիւնն ատելի հիմնաւորուում է, երբ փորձում ենք զուգահեռ վերլուծել վարագոյրի խորհրդարանութեան, պատկերագրութեան զանազան համատեքստերը⁴⁵:

⁴² Նոր բառգիրք..., հ. 2, էջ 468:

⁴³ Զ. Թ. Գայայեան, *Բառարան զանձարան հայերէն լեզուի*, Գահիրէ, 1938, էջ 461:

⁴⁴ Հանդիպում ենք նաեւ՝ Ելք, ԻԶ. 14:

⁴⁵ Այդ տեսանկիւներից քննարկուած օրինակներ տնւ **Ն. Վ. Աշուղաթոյեան**, «Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքին 1818 թուականին նուիրաբերուած եկեղեցական մի վարագոյրի մասին», *Էջմիածին ամսագիր*, 2021, Բ, էջ 126-138, տնւ նաեւ **Ն. Վ. Աշուղաթոյեան**, «Չինական վիշապներով եկեղեցական մի վարագոյրի մասին կամ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի «Վիշապագոյրը»», *Միոն*, (Կրօնական, գրական, բանասիրական պաշտօնաթերթ Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան), 2021, թիւ 4-7, էջ 157-165:

ABOUT THE MANIFESTATIONS OF THE WORD "VARAGOUR" IN THE ARMENIAN LANGUAGE

NAREK (VAN) ASHUGHATOYAN

PhD seeker of Matenadaran named after M. Mashtots

ABSTRACT

In this article, the issues of the origin of the widely used Armenian word “varagour” /վարագուր/ (curtain) are discussed, as well as its various dialectal manifestations and synonyms. The rich dialectal forms and synonyms of this word in the Armenian language and its ideological features allow us to think that the phenomenon of a curtain has particular importance in the Armenian environment.

Keywords: *Armenian church altar curtain, varagour, tente, parda.*

О ПРОЯВЛЕНИЯХ СЛОВА "ВАРАГУЙР" В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

НАРЕК (ВАН) АШУГАТОЯН

Сотискатель Матенадарана имени М. Маштоца

РЕЗЮМЕ

В данной статье обсуждаются вопросы происхождения широко используемого армянского слова «варагуйр» /վարագուր/ (занавес), а также его различных диалектных проявлений и синонимов. Богатые диалектные формы и синонимы этого слова в армянском языке и его философские черты позволяют думать, что феномен занавеса имеет особое значение в армянской среде.

Ключевые слова: *варагуйр, занавес, Армянская церковь, занавес алтаря.*

